ՔԱՂՎԱԾՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՎԱԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄԻՑ

« 25 » _____մարտի_____ 2019թ. N _12_

Ծովազարդ համայնքի թիվ 2 նիստի օրակարգը հաստատելու մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Ծովազարդ համայնքի ավագանու 2019 թ.-ի թիվ 2 նիստի օրակարգը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ /5/ դեմ /-/ ձեռնպահ /-/

Արթուր Դավթյան
Կարեն Մխիթարյան
Ջանիկ Ղարիբյան
Նորիկ Կարոյան
Սասուն Գալոյան

Իսկականի հետ ճիշտ է՝
Աշխատակազմի քարտուղար՝ Վ. Մարգարյան

ՔԱՂՎԱԾՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾՈՎԱՁԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄԻՑ

«25» _____մարտի_____ 2019թ. N _13_

Համայնքապետարանի, համայնքային ենթակայության մանկապարտեզի, մշակույթի տան և գրադարանի գույքի ամենամյա պարտադիր գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

Ղեկավարվելով ՏԻՄ ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 10 –րդ մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 32 կետի դրույթներով Ծովազարդ համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել համայնքապետարանի, համայնքային ենթակայության մանկապարտեզի, մշակույթի տան և գրադարանի ամենամյա պարտադիր գույքագրման փաստաթղթերը /կից հավելվածով/:
2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

կողմ 5, դեմ 0, ձեռնպահ 0

Արթուր Դավթյան
Կարեն Մխիթարյան
Ջանիկ Ղարիբյան
Նորիկ Կարոյան
Սասուն Գալոյան

Իսկականի հետ ճիշտ է
Աշխատակազմի քարտուղար՝ Վ. Մարգարյան

ՔԱՂՎԱԾՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՎԱՋԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄԻՑ

« 25 » մարտի 2019թ. N 14

ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 18-րդ հոդվածի 5-րդ կետով, ՀՀ «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 83-րդ հոդվածով, ՀՀ «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ կետով՝ համայնքի ավագանին **որոշում է՝**

Ծովազարդ համայնքի 2019 թվականի բյուջեի ծախսային մասում կատարել հոդվածային փոփոխություն:

1. Ծովազարդ համայնքի 2019թ. բյուջեի ըստ գործառնական դասակարգման 01 բաժնի 03 խմբի 03 դասի 4234 հոդվածում /ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ նախատեսված 120000/ մեկ հարյուր քսան հազար /ՀՀ դրամը տեղափոխել նույն դասակարգման 4232 հոդված համակարգչային ծառայություն ձեռք բերելու համար:

2. Հանձնարարել հաշվապահ Ա. Նաջարյանին կատարել համայնքի 2019թ. բյուջեի փոփոխությունը և ներկայացնել նոր նախահաշիվ նոր ժամանակացույց և նոր քաղվածք պայմանագիր :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

կողմ /5/ դեմ /-/ ձեռնպահ /-/

Արթուր Դավթյան
Կարեն Մխիթարյան
Ջանիկ Ղարիբյան
Նորիկ Կարոյան
Սասուն Գալոյան

Իսկականի հետ ճիշտ է՝
Աշխատակազմի քարտուղար Վ.Մարգարյան

ՔԱՂՎԱԾՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՎԱՁԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄԻՑ

« 25 » _____մարտի_____ 2019թ. N _15_

Ծովազարդ համայնքը ՀՀ համայնքների միությանը անդամակցելու և անդամավճար հատկացնելու մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 24-րդ մասով համայնքի ավագանին որոշում է՝

1. Ծովազարդ համայնքը անդամակցել Հայաստանի Հանրապետության համայնքների հիմնադրած միությանը և տարեկան մուծել անդամավճար քսաներկու հազար հինգ հարյուր ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ /5/ դեմ /-/ ձեռնպահ /-/

Արթուր Դավթյան
Կարեն Մխիթարյան
Ջանիկ Ղարիբյան
Նորիկ Կարոյան
Սասուն Գալոյան

Իսկականի հետ ճիշտ է՝
Աշխատակազմի քարտուղար՝ Վ. Մարգարյան

ՔԱՂՎԱԾՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՎԱՋԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄԻՑ

« 25 » ____մարտի_____ 2019թ. N _16_

Համայնքապետարանի հաշվեկշռում հաշվառված ՊԱԶ-672 ավտոբուսի և ԴՏ-75 թրթուրավոր տրակտորի/բուլդոզեր/ շահագործման մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 19-րդ և 21-րդ կետերով՝ համայնքի ավագանին որոշում է՝

1. Համայնքապետարանի հաշվեկշռում հաշվառված ՊԱԶ-672 մակնիշի 775 US 31 պետհամարանիշի ավտոբուսը շահագործել համայնքի դպրոցական երեխաներին տանից դպրոց և հակառակ ուղղությամբ տեղափոխելու, հուղարկավորության արարողությունների ժամանակ համայնքի բնակիչներին գերեզմանատներից հանդիսությունների սրահ տեղափոխելու համար: Նշված ծառայությունների մատուցման ծախսերը կատարել համայնքի բյուջեի միջոցների հաշվին:
2. Համայնքապետարանի հաշվեկշռում հաշվառված ԴՏ-75 թրթուրավոր տրակտորը/բուլդոզեր/ շահագործել համայնքում սանիտարական մաքրման, գյուղամիջյան և դաշտամիջյան ճանապարհների վերանորոգման համար:
Նշված աշխատանքների ծախսերը կատարել համայնքի բյուջեի միջոցների հաշվին:
ԴՏ-75 թրթուրավոր տրակտորը/բուլդոզեր/ երեք տարի ժամկետով հասարակական հիմունքներով անհատույց տրամադրել համայնքի բնակիչ Անդրանիկ Խաչիկի Նաջարյանին վերոնշված աշխատանքները կատարելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ /5/ դեմ /-/ ձեռնպահ /-/

Արթուր Դավթյան
Կարեն Մխիթարյան
Ջանիկ Ղարիբյան
Նորիկ Կարոյան
Սասուն Գալոյան

Իսկականի հետ ճիշտ է՝
Աշխատակազմի քարտուղար՝ Վ. Մարգարյան

ՔԱՂՎԱԾՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾՈՎԱՁԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄԻՑ

«25» _____մարտի_____ 2019թ. N _17_

Համայնքային ենթակայության մանկապարտեզի, մշակույթի տան և գրադարանի հաշվեկշռում առկա ոչ պիտանի գույքի դուրս գրման մասին:

Ղեկավարվելով ՏԻՄ ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, հիմք ընդունելով Ծովազարդ համայնքի ղեկավարի 09.01.2019թ.-ի թիվ 2 կարգադրությունով ստեղծված հանձնաժողովի կողմից համայնքի ավագանու քննարկմանը ներկայացված 1990-ական թվականներին ձեռք բերված, համայնքային ենթակայության մանկապարտեզի, մշակույթի տան և գրադարանի հաշվեկշռում առկա ֆիզիկապես մաշված, հետագա օգտագործման համար ոչ պիտանի գույքերի ցուցակները համայնքի ավագանին որոշում է՝

1. Համաձայնություն տալ խոտանելու/դուրս գրելու/ Ծովազարդ համայնքի համայնքային ենթակայության մանկապարտեզի, մշակույթի տան և գրադարանի հաշվեկշռում առկա, համայնքի ավագանու քննարկմանը ներկայացված՝ ֆիզիկապես մաշված և հետագա օգտագործման համար ոչ պիտանի գույքերը կից ցուցակներով:

Ծովազարդի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հիմնական միջոցներից դուրս գրման ենթակա գույքի ցուցակ

ՀՀ	Գույքի անվանումը	Ձեռք բերման տարեթիվը	Քանակը	Այլ նշումներ
1	Մանկական աթոռ	1990թ.	35	կոտրված
2	Գրքերի պահարան /շկաֆ/	1990թ.	4	կոտրված
3	Մահճակալ	1990թ.	6	կոտրված
4	Էլեկտրական պլիտա	1990թ.	2	անսարք
5	Բարձ	1990թ.	17	ոչ պիտանի
6	Լեժանկա	1990թ.	1	կոտրված
7	Ջրատաքացուցիչ /կիպիտելնիկ/	1990թ.	1	անսարք
8	Էլեկտրական շիթ	1990թ.	1	անսարք
9	Պլիտա փոքր	1990թ.	1	անսարք
10	Գրահատ հավի	1990թ.	2	ոչ պիտանի
11	Բաժակ	1990թ.	16	կոտրված
12	Էլեկտրոնիկա	1990թ.	1	անսարք
13	Ծաղկամանի պատվանդան	1990թ.	2	կոտրված
14	Հագուստի պահարան	1990թ.	1	կոտրված

Ծովազարդի մշակույթի տան հիմնական միջոցներից դուրս գրման ենթակա գույքի ցուցակ

ՀՀ	Գույքի անվանումը	Ձեռք բերման տարեթիվը	Քանակը	Այլ նշումներ
1	Հարվածող գործիք	1990թ.	1	կոտրված
2	Գրապահարան	1990թ.	1	կոտրված
3	Երկաթյա աթոռ	1990թ.	9	կոտրված
4	Խոսափող /միկրաֆոն/	1990թ.	1	անսարք

Ծովազարդի մշակույթի տան հիմնական միջոցներից դուրս գրման ենթակա գույքի ցուցակ

ՀՀ	Գույքի անվանումը	Ձեռք բերման տարեթիվը	Քանակը	Այլ նշումներ
1	Էլ. Պլիտա	1990թ.	1	Չի աշխատում
2	Կախիչ	1990թ.	1	կոտրված

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Քվեարկվում է՝ կողմ 5, դեմ 0, ձեռնպահ 0

Արթուր Դավթյան
Կարեն Մխիթարյան
Ջանիկ Ղարիբյան
Նորիկ Կարոյան
Սասուն Գալոյան

Իսկականի հետ ճիշտ է
Աշխատակազմի քարտուղար՝ Վ. Մարգարյան